

15) Ինչպե՞ս է Յիսուսի մկրտութեան պատկերագրութիւնը հայկական աւանդութեան մէջ:

5-6-րդ դարերէն սկսած Ս. մկրտութեան մանրանկարներուն մէջ կը տեսնենք նաեւ հրեշտակներ, իրենց ձեռքերուն մէջ սրբիչներ, հագուստներ կամ իւղի սրուակներ: Տիրոջը սպասարկող հրեշտակները կը գտնուին կամ գետի ափին կանգնած, կամ ալ վերէն ղէպի երկիր թեքուած: Յաճախ մանրանկարներուն ներքեւի մասը կը հանդիպինք ծերունանման մարդու մը՝ սափորը ձեռքին կամ փող փչելու վիճակով: Արուեստաբանները ասոր կ'անուանեն «Յորդանանի արքայ», որ սատանայի գեղարուեստական կերպաւորումներէն է:

Պատկերի վերի մասը Աստուծոյ Աջն է, որմէ բխող աղաւնակերպ Ս. հոգին կ'իջնէ Յիսուսի վրայ բացառապէս Ս. Երրորդութեան խորհուրդը: Իսկ գետի մէջ խաչի կամ խաչակոթողի պատկերը ցոյց կու տայ մարդկութեան փրկութիւնը Տէրունական նշանով:

Սաղմոս 119 (118)

Տէ՛ր, քու խօսքդ յաիտեան կը մնայ երկինքի մէջ: Քու ճշմարտութիւնդ նոյնն է բոլոր սերունդներուն համար: Երկիրը հաստատեցիր, եւ կը մնայ մինչեւ այսօր: Ամէն ինչ քու հրամանովդ կը գոյատեւէ, որովհետեւ բոլորն ալ քու ծառաներդ են:

**ԱՂԱՆԴԱԴՈՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**

**ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ
11. ԴԺՈՒՔ ԵՒ ՅԱԻՒՏԵՆԱԿԱՆ
ՏԱՆՋԱՆՔ**

Բ - Կ'ըսեն՝ թէ Սատանան եւ իր արբանեակներն ալ պարզապէս պիտի փճանան եւ ո՛չ թէ յաւիտեան պիտի տանջուին:

Յայտնութեան գիրքը սա կարեւոր վկայութիւնը կու տայ. «Եւ երկինքէն, Աստուծոմէ կրակ իջաւ եւ սպաննեց զանոնք [Սատանային ետեւէն մոլորածները] եւ Բանսարկուն՝ որ զանոնք մոլորեցուց, ձգուեցաւ կրակի ու ծծումբի լիճին մէջ, ուր կը գտնուէր զազանը, եւ սուտ մարգարէն. եւ ՊԻՏԻ ՉԱՐՉԱՐՈՒԻՆ ՅԵՐԵԿ ՈՒ ԳԻՇԵՐ ՅԱԻՒՏԵԱՆՍ ՅԱԻՒՏԵՆԻՑ» (Յայտ. 20.9-10):

12. ԿՐՕՆԱԿԱՆ ՏՕՆԵՐ

Եկեղեցիներէն ներս նշուող սօնական օրերուն (նաեւ ազգային սօներուն) համար կ'ըսեն, թէ Աստուած կամ Աստուածաշունչը չէ՛ հրահանգած զանոնք եւ թէ՛ Ծնունդը կամ Զատիկը հեթանոսական են եւ ո՛չ քրիստոնէական:

Միրելի ընթերցող, ճՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ՃԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018

ԹԻՒ 38

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՆԵՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 14.3-17: Բ. Կր. 10.18-11.10
ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 10.1-12

Յիսուս Կափառնայումէն Հրեաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միւս կողմէն անցնելով: Դարձեալ խուռն բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցան, եւ Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

Փարիսեցիները զինք փորձելու նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին. «Ո՞ւր մէկը իրաւունք ունի՞ իր կինը արձակելու»:

Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»:

Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»:

Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդեռ սկիզբէն, ստեղծագործութեան ժամանակ, Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. "Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան": Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ռեւէ մէկը թող չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»:

Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կինը եթէ ձգէ իր ամուսինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՀԵՌՈՒ ԿԸ ՊԱՇՏԵ ԶԱՐԻՔԸ

Եթէ Իմաստութիւնը միշտ ներկայ ըլլայ մէջդ եւ գիտութիւնը անձիդ համար օգտակար նկատես, այն ատեն բարի խորհուրդները քեզ պիտի պահեն եւ մաքուր մտածումները քեզ պահպանեն, որպէսզի քեզ փրկեն չար մանապարհէն եւ նենգամիտ մարդէն: Վա՛յ անոնց, որոնք ուղիղ մանապարհը թողած՝ խաւար մամբաներէ կը փայնեն, որոնք կ'ուրախանան չարիք գործելով եւ կը խնդան դէպի չարը խտորելով: (Առակ Բ. 10-14):

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԿՈՒ ՍԱՆԱՏՆ՝ ՓԵՓՐՈՆԵԱՅ ԵՒ ՄԱՐԻԱՆԵԱՅ ԵՒ ՇՈՒՇԱՆԱՅ՝ ԴՍԵՐ ՄԵԾԻ ՎԱՐԴԱՆԱՅ

ՓԵՓՐՈՆԵԱՅ ԿՈՅՍ

Մատաղ տարիքին Մծբինի կուսանոցին կը նուիրուի Փեփրոնեայ եւ կը յանձնուի Բրիտնիա անունով կուսանոցի հոգեւոր առաջնորդի խընամքին: Ան կը յատկանշուէր իր գեղեցկութեամբ եւ քրիստոնէական բարձր վարքով:

Դիակղեւտիանոս կայսեր հալածանքներու շրջանին, երբ հալածիչները կը դրկուին Մծբին, փրկելու համար կուսանոցի կոյսերը, գաղտնի միջոցներով կը փախցնեն զիրենք ապահով թաքստոցներ: Մակայն Փեփրոնեայ կոյս հիւանդ ըլլալով չի կրնար տեղէն շարժիլ եւ թաքնուիլ: Ուստի կը մնայ կուսանոցին մէջ, իր հետ ունենալով Բրիտնիա հոգեւոր առաջնորդը եւ Թումայիս անունով կոյս մը: Հալածիչները շալկելով Փեփրոնեայ կոյսը դատաւորին առջեւ կը հանեն, որ բազմաթիւ խոստումներ ընելով կը փորձէ համոզել կոյսը ուրանալու քրիստոնէութիւնը եւ ամուսնալու դատաւորին կողքին գտնուող Լիւսիմաքոս անունով երիտասարդին հետ, որու մայրը քրիստոնէայ ըլլալով, գաղտնաբար քրիստոնէական դաստիարակութիւն ստացած էր: Փեփրոնեայ կը մերժէ առաջարկը եւ յանձն կ'առնէ նահատակուիլ, քան թէ իր սուրբ կրօնքը ուրանալ: Ուստի դատաւորին հրամանին վրայ նախ ոտքերն ու ձեռքերը կը կտրեն եւ ապա զլիսատելով կը նահատակեն զայն:

Այս դէպքին վրայ դատաւորը կը խելագարի եւ գլուխը սինին զարնելով կը մեռնի, իսկ Լիւսիմաքոս երիտասարդը խորանալով իր հաւատքին մէջ, պատուով թաղել կու տայ կոյսին մարմինը Մծբինի կուսանոցին մէջ:

ՄԱՐԻԱՆԵ ԿՈՅՍ

3-րդ դարուն ապրած Մարիանէ կոյսը փոքր տարիքէն մօրը կողմէ որբացած հեթանոս քուրմի դուստրը եղած է:

Երբ Մարիանէի մայրը կը մեռնի, հայրը զինք կը յանձնէ քրիստոնէայ ստնտուի մը, որ ֆիզիքականի զուգահեռ հոգեպէս կ'աճեցնէ զինք քրիստոնէական առողջ դաստիարակութիւն տալով: Մարիանէ երբ կը մեծնայ, հայրը կը փափաքի նուիրել զինք հեթանոս չաստուածներուն, որպէս քրմուհի: Սակայն Մարիանէ կը մերժէ ենթարկուիլ եւ կը յայտնէ իր քրիստոնէական հաւատքը: Հայրը սաստիկ զայրանալով, տունէն դուրս կը վտարէ կոյսը, որ մեծ ուրախութեամբ կը փութայ մանկութեան ստնտուին եւ անոր քով մնալով, հովուութեամբ կը զբաղի:

Օր մը, հովուութեան ընթացքին Մարիանէ կը ձերբակալուի որպէս քրիստոնէայ եւ բազմաթիւ չարչարանքներու ենթարկուելէ ետք կը զլիսատուի շուրջ 275 թուականին:

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. Սիրեցէ՛ք զիրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ զիրար սիրեցէ՛ք: Ձեր իրար սիրելով է, որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք: (Յով. 13.34-35)

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Ո՛Վ ՄԱՅՐ, ԺԱՄԱՆԱԿ ԱՆՅՈՒՐ ՁԱԿԻԴ ԴԵՏ

Մայր մը, որ ժամանակ չանցնէր զաւակին հետ իր զաւակը չի կրնար իրեն կապուած մնալ երբ մեծնայ: Կան մայրեր որոնք հեռատեսիլի հետ աւելի ժամանակ կ'անցնեն քան իրենց զաւակներուն հետ: Կան մայրեր որոնք իրենց ընկերուիկներուն եւ իրենց «ըսի-ըսաւ»ներուն հետ աւելի ժամանակ կ'անցնեն քան իրենց զաւակներուն հետ:

Կին մը մայր չ'ըլլար երբ զաւակ կը բերէ աշխարհ, այլ՝ մայր կ'ըլլայ, երբ իր զաւակին մայրութիւն կ'ընէ: Իսկ մայրութիւն ըսելով կը հասկնամ՝ կատարեալ հոգատարութեան ու գորովի, եւ ամբողջական սիրոյ ու խանդաղատանքի ցուցաբերում իր զաւակին հանդէպ:

Հոգեբաններ կ'ըսեն, թէ մօրը եւ հօրը սէրը չվայելող մանուկը, երբ մեծնայ՝ դժուարութիւն կ'ունենայ ուրիշը սիրելու:

Եսայի մարգարէն կը խօսի իրենց զաւակները հանգստացնող մայրերու մասին (66.13): Չաւակ մը ի՛նչպէս կը հանգստանայ, այլ խօսքով, ի՛նչպէս հոգեկան հանգիստ ու երջանկութիւն ձեռք կը ձգէ, եթէ ոչ մօրը սիրովն ու քաղցրութեամբ: Այո՛, մօր մը սէրն է, որ հոգիի ու սրտի հանգստութիւն ու խաղաղութիւն կը պարգեւէ իր զաւակին:

Յարգելի մայրեր, ժամանակ անցուցէ՛ք ձեր զաւակին հետ, անիմաստ զբաղումները կեանքին մէջ ժամանակաւոր են: Ձեր զաւակները ձեր զանձերն են: Տէր եղէ՛ք եւ ժամանակ տրամադրեցէ՛ք ձեր զաւակներուն:

ՀՈԳԵԻՈՐ ԵՈՐՀՐԴԱՏՈՒ

ԿԵԱՆՔԻԴ ԴԵԿԸ ՅԻՍՈՒՄԻ ՅԱՆՁՆԷ

Քրիստոնեայ մարդուն կեանքը մրրկալից նաւարկութիւն մըն է: Մի՛ ելլեր հովերու դիմաց առանց հովի Արարիչը հետոյ առնելու: Սեփական ջանքովդ չես կրնար առաջնորդել կեանքիդ նաւը դէպի խաղաղութիւն: Ոմանք միայն անունով քրիստոնեայ են, եւ ոմանք ալ՝ իրապէս: Անոնք որոնք միայն անունով քրիստոնեայ են՝ Քրիստոս կը գտնուի իրենց նաւակին յետակողմը, քանզի վիճակի մէջ (Մր. 5.38): Իսկ անոնք որոնք իրապէս քրիստոնեայ են՝ իրենց կեանքի դեկը Քրիստոսի ձեռքին մէջն է: Սիրելի՛ բարեկամ, ո՞ւր է Քրիստոս կեանքիդ նաւակին մէջ. նաւակին յետակողմը, թէ՛ նաւակին դեկին ետին: Դուն ալ աշակերտներուն նման միայն փոթորիկի՞ ատեն կը դիմես Յիսուսի որ կեանքիդ յետակողմը, այսինքն՝ մէկ անկիւնը դրած ես: Յիսուսի տեղը կեանքիդ մէկ անկիւնը պետք չէ ըլլայ, այլ կեանքիդ մէջտեղը՝ միշտ դեկին ետին:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

Մենք պետք է միշտ Աւետարանի խրատով դաստիարակուինք՝ լուսաւորուելու համար, որպէսզի ձեռք ձգենք Կտակարաններու մէջ ամփոփուած ճշմարտութեան Սուրբ Յոգիի շնորհքներէն: Ուստի դադրի՛ք վայրապար քննութենէ եւ ընթանա՛նք Սուրբ Գիրքի՛ Յին եւ Նոր Կտակարաններուն խրատներով: Սուրբ Գիրքերը մեր Վարդապետներն են: Անոնց միջոցաւ ընդունինք յաւիտենական յոյսը եւ անոնցմով բարձրանանք աշխարհէն վեր:

Գրիգոր Լուսաւորիչ